ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. հուլիսի 18 թիվ 69 -Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հաշվեկշռում եղած առկա համակարգիչների տեխնիկական վիճակի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ հուլիսի 18-ից 20-ը կատարել ուսումնասիրություն և ներկայացնել առաջարկություններ համակարգիչների պիտանելիության (դրանից քանիսն են ենթակա վերանորոգման և քանիսն են ենթակա դուրս գրման և խոտանման) վերաբերյալ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. հուլիսի 18-ի թիվ 69 -Ա կարգադրության

ԿԱԶՄ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ն.Գալստյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Մ.Գրիգորյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Գ.Ներսեսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Գ.Գևորգյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետ

Կ.Ղոնախչյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ